

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16/6

2 մայիսի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Տիգրան Ասկիջյանի գանգատը « ԿԱ ՊԵԿ Չարենցավանի ՏՀՏ 05.04.2012թ. թիվ 2109976 ստուգման ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ « ԿԱ ՊԵԿ Չարենցավանի ՏՀՏ պետի 13.03.2012թ. թիվ 2201097 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Տիգրան Ասկիջյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 24.03.2012թ-ին կազմվել է թիվ 2201097 արձանագրությունը, որում արձանագրվել է, որ ավագ հարկային տեսուչ Դավիթ Պետրոսյանի կողմից 24.03.2012թ. ժամը 17:18-ին Կոտայքի մարզ, ք.Չարենցավան, 7-րդ թաղամաս, 3-րդ շենքի հարակից տարածքում գտնվող խանութից պատվիրվեց մանկական սավան, որի դիմաց կանխիկ դրամով կատարվեց կանխավճար 1000 դրամի չափով: Վաճառող-գանձապահի կողմից գումարը չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ուսումնասիրությունն անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները, և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 17:20-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Z» հաշվետվություն՝ 2150 դրամ ընդհանուր գումարով, որի մեջ ներառված էր կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 1000 դրամը, ժամը 17:21-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 17:21-ին դուրս բերվեց «Z» հաշվետվությունը՝ 1000 դրամ ընդհանուր գումարով: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հիմք ընդունելով տնտեսվարող սուբյեկտի մոտ « ԿԱ ՊԵԿ Չարենցավանի ՏՀՏ պետի 13.03.2012թ. թիվ 2201097 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում կազմված թիվ 2201097 արձանագրությունը, որով արձանագրվել է « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջների խախտման փաստը, և ղեկավարվելով «ՀՀ-ում տուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի ու «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով՝ տնտեսվարող սուբյեկտին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150 000 դրամի չափով:

Ա/Ձ Տիգրան Ասկիջյանի գանգատում մասնավորապես նշված է.

Մարտի 24-ին ժամը 17-ի սահմաններում խանութ է մուտք գործում քաղաքացի (հարկային տեսուչ Դավիթ Պետրոսյան) և պահանջում ներքնակի մթել (մանկական), ոչ ճիշտ չափերով: Նախօրոք նշեմ, որ քաղաքացին մոտ մեկ շաբաթ անընդմեջ գնումներ է կատարում խանութից և միշտ ստանում ՀԴՄ կտրոն: Վաճառողուհի Նարինե Իսրայելյանի կողմից բացատրվում է պահանջվելիք ապրանքի չափերի սխալ լինելը և առաջարկում արդեն խանութում ճիշտ ճափերով գոյություն ունեցող ապրանք: Այդ ժամանակ խանութում եմ գտնվել նաև ես՝ Ա/Ձ Տիգրան Ասկիջյանս: Հաճախորդը շարունակում է պնդել, որ իր համար պատրաստվի նորը՝ իր ուզած չափերով: Ի դեպ նշեմ, որ խանութն իրականացնում է անվճար ծառայություն՝ պատվերների արժեքը հաշվում է միայն նրա վրա օգտագործված կտորի արժեքով (կարել է անվճար): Նա հարցնում է, թե ինչ կարծես ապրանքը, նրան ասվում է, որ իր պահանջված ապրանքի վրա կծախսվի 1300 դրամի կտոր, սակայն պատվերը չի կատարվի, քանզի պետք է ճշտում մտցնել չափերի մեջ: Այս երկար բացատրությունից հետո քաղաքացին արագ հեռանում է խանութից: Նրա դուրս գալուց մեկ րոպե հետո սեղանի վրա հայտնաբերվում է 1000 դրամ: Իմ կողմից վաճառողուհուն հանձնարարվում է 1000 դրամը պահել իր մոտ՝ հետագայում հաճախորդին վերադարձնելու նպատակով, քանի, որ նա պետք է վերադառնար ճիշտ չափերով: Սակայն քաղաքացին վերադառնում է մոտ 3-5 րոպե հետո հարկային տեսուչ Ալեքսանդր Մխիթարյանի

հետև և ներկայացնում են օրենքի խախտման արձանագրությունը: Ներկայացնում են փաստաթղթեր և առաջարկում ստորագրել: Ես բնականաբար հրաժարվում եմ ստորագրել և նրանց բացատրում եմ, որ ոչ մի օրենք չի խախտվել իմ խանութում: Քանի որ նախ կանխավճար չեմ տեսել, տեսել եմ միայն սեղանին թողնված 1000 դրամը: Վաճառողուից պահանջել եմ 1000 դրամը և վերադարձրել տեսուչներին: Հետո նրանց բացատրել եմ, որ ես առևտրային ոչ մի գործարք չեմ իրականացրել, հետևաբար ինչի պետք է տրամադրվեր կտրոն, չէ որ կտրոնը տրամադրվում է ապրանքի հետ միասին: Ընդհանուր հայտարարի չգալով նրանք հեռացել են խանութից՝ պահանջելով ինձ ներկայանալ հարկային տեսչություն:

Նշեմ նաև, որ համաձայն չեմ արձանագրության հետ, այնտեղ գետնեղված են կեղծ տեղեկություններ: Իրենց կողմից արձանագրված (կանխավճարի) վճարը կատարել է միայն հարկային տեսուչ Դավիթ Պետրոսյանը, Ալեքսանդր Մխիթարյանին տեսել եմ միայն խախտման մասին տեղեկությունը հայտնելիս: Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշման 19-րդ կետի բ) ենթակետի պահանջներից, եթե նույնիսկ համարենք, որ հարկային տեսուչի կողմից թողնված 1000 դրամը կանխավճար է, ապա նույն գլխի համաձայն ՀԴՄ շահագործող անձը պարտավոր է ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարը ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին տրամադրել դրամարկղային չեկ (կտրոն), հետևաբար վաճառողի կողմից օրենքի խախտում չի կատարվել:

Ի դեպ Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի և վերը նշված կառավարության որոշման դրույթի մեջ հակասություն, երկիմաստություն կամ տարրնթերցման առկայության դեպքում, համաձայն ՀՀ արկերի մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի գ) կետի երկրորդ պարբերության՝ դրույթը մեկնաբանվում է հարկ վճարողի օգտին:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Տիգրան Ասկիջյանի և հսկիչ գնումն իրականացրած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում Ա/Ձ Տիգրան Ասկիջյանի նկատմամբ ընդունվել է ոչ բարենպաստ վարչական ակտ, հետևապես դրանում տեղ գտած տեղեկությունների ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը, ի դեմս հսկիչ գնումն և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց: Սակայն, լսելով Ա/Ձ Տիգրան Ասկիջյանի և հսկիչ գնումն իրականացրած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ քննարկվող դեպքում առկա չեն բավարար հիմքեր 24.03.2012թ-ի ՀՀ ԿԱ ՊԵԿ հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2201097 արձանագրությամբ արձանագրված խախտումն ապացուցված համարելու համար:

Վերոգրյալից հետևում է, որ ստուգման ակտը կազմվել է Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ:

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անվավեր է առ տչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով. »:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ արկային ծառայության մասին ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Չեղյալ համարել
ակտը:



որոշում է՝

Հանձնաժողովի նախագահ

ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախնցավորի ՏՏՏ 05.04.2012թ. թիվ 2109976 ստուգման

S.ԲԱՐՍԵԴՅԱՆ